ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

(Պրոբլեմը և լուծման փորձերը)

Վ. Հ. ՌՇՏՈՒՆԻ

Ռուսաստանին միանալու նախօրյակին Արևելյան Հայաստանի տնտեսական-սոցիալական հարաբերությունների մասին առաջինը գրել է Հայկական մարզի չինովնիկ Իվան Շոպենը, ֆելդմարշալ Պասկևիչի առաջադրանքով 1829—1837 թվականներին[1]։

Նա առաջաբանում իր աշխատության բնույթի մասին նախազգուշացում է անում ընթերցողին, որ գիտնականի ուսումնասիրություն չէ այն, ոչ էլ գիտնականների համար գրված, այլ «....սոսկ վարչական չինովնիկի աշխատություն, որը ճիգ է արել ամենահնարավոր ճշգրտությամբ, մանրամասնությամբ և ջանախնդրությամբ կատարել իշխանության կողմից իրեն արած հանձնարարությունը»։ Նրա կարծիքով իր գիրքը «Հայաստանի մասին անհրաժեշտ տեղեկությունների մի տեսակ գործնական հանրագիտարան է. ձեռքի գիրք ամեն մի զինվորական և քաղաքացիական չինովնիկի համար, որը ծառայության է կոչված այնտեղ...»[2]։

Շոպենի գրքի մասին ճիշտ դատելու համար անօգուտ չի լինի հաշվի առնել հետևյալ հանգամանքը։ Աշխատությունը գրվել է այն տարիներում, երբ հելլինակի շեֆը՝ Պասկևիչը ֆինանսների մինիստր Կանկրինի հետ հիմնավորում էր Անդրկովկասի գաղութ լինելը Ռուսաստանի համար[3], *ապա կենտրոնական իշխանության այլ ներկայացուցիչների՝ սենատորներ Մեշնիկովի և Կուտայսովի հետ միասին նախագիծ էր մշակում Անդրկովկասը «կապել Ռուսաստանի հետ քաղաքացիական և քաղաքական կապերով մեկ միասնական մարմնի մեջ»*[4]։

Այսպիսի պայմաններում գլխավոր խնդիրն այն չէր, որ ճանաչվեին և ներկայացվեին Ռուսաստանին միացված երկրի տնտեսական-սոցիալական կյանքի բոլոր առանձնահատկություններն այնպես, ինչպես որ դրանք գոյություն ունեին, այլ այնպես, ինչպես այդ համապատասխանում էր երկրի նոր տերերի քաղաքական մտադրություններին։ Իսկ հայտնի է, որ մինչև 1840-ական թվականների սկիզբը, այսինքն՝ մինչև սենատոր Գանի հանձնաժողովի մշակած

[1] *Н. Шопен*, Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПБ, 1852.

[2] Ի. Շոպեն, *Նշված գրքի առաջաբանը, էջ 5։*

[3] „Обозрение российских владений за Кавказом", I, стр. 12—13.

[4] „Колониальная политика российского царизма в Азербайджане", I, стр. 19—21.

ռուսացման միջոցառումների կենսագործման տապալումն Անդրկովկասում, ցարիզմը մասնավորապես Արևելյան Անդրկովկասում, այսինքն՝ Հայաստանում և Ադրբեջանում, հեռու էր տեղական կալվածատիրության վրա հենվելու մտքից և ռուսական կալվածատիրական տարր ստեղծելու մեջ էր որոնում իր զաղութային քաղաքականության ամրապնդման տնտեսական-սոցիալական հենարանը։

Իհարկե, այսպիսի հանգամանքներում անիմաստ և աննպատակահարմար քայլ կլիներ տեղական կալվածատիրական շերտերի իրավունքների ճանաչումը նույն բովանդակությամբ, ինչ որ գոյություն ուներ Ռուսաստանում[1], իսկ իրոք, ցարիզմը երբեք այդպես չվարվեց ոչ միայն նշված ժամանակաշրջանի իր պաշտոնական դոկումենտներում, այլև այն տարիներում, երբ Կովկասի առաջին փոխարքա Մ. Ս. Վորոնցովի միջոցով ճորտատիրական-կալվածատիրական շատ իրավունքներով օժտեց հայ և ադրբեջանական կալվածատիրական զանազան խմբերի՝ նրանց իր զաղութային սոցիալական քաղաքականության պատվանդանը դարձնելու մտադրությամբ։

Այդ նոր կուրսը տեղական կալվածատիրության նկատմամբ պատճառաբանվում էր ոչ թե այդ այսպես կոչված «բարձր դասի» (ինչպես արտահայտվում էին ժամանակի պաշտոնական թղթերում) հին իրավունքների ճանաչումով, այլ կայսրի հատուկ ողորմածությամբ դեպի նա։ Ուստի ստացվում էր այնպես, որ «բարձր դասի» ներկայացուցիչներն օժտվում էին ռուսական ազնվականների զրեթե բոլոր ճորտատիրական իրավունքներով։ Մինչդեռ թե պաշտոնական դոկումենտներում, և թե՛ պաշտոնական պատմաբանների «գիտական ուսումնասիրություններում» անվերջ կրկնվում էր այն միտքը, թե Արևելյան Անդրկովկասում չի եղել ֆեոդալական հողատիրություն, գյուղացիներն իբր թե ազատ էին ճորտատիրական որևէ կախումից և պաշտոնապես անվանվում էին «պետական շինականներ» (государственные поселяне), որոնք ապրում էին տիրունական (владельческий) հողի վրա, ինչպես որ կային պետական գյուղացիներ (государственные крестьяне), որոնք ապրում էին պետական հողի վրա։

Ցարական պատմաբաններից այս տեսակետն առաջին անգամ պաշտպանել է Հայկական մարզի ռուսական չինովնիկ Իվան Շոպենը, որը մի կողմից՝ ազավաղված ձևով է ներկայացնում Երևանի և Նախիջևանի խանությունների սոցիալական հարաբերությունները, ժխտում է մուլքադարների և թիուլիսաների (թիուլդարների) ֆեոդալական կալվածատերեր լինելու հանգամանքը և նրանց գյուղացիների վրա ծանրացած տնտեսական-իրավական պարտավորությունների ֆեոդալական-ճորտատիրական բնույթը, իսկ մյուս կողմից՝ իր ընդհանուր «թեորիական» պնդումին հակառակ հաղորդում է այնպիսի տվյալներ, որոնք Հայկական մարզում տիրող արտադրական հարաբերությունների ֆեոդալական բնույթն են վկայում՝ տոգորված ճորտատիրական շատ գծերով։

Պետք է նշել, որ ցարական մյուս պատմաբաններն էլ, օրինակ՝ Վ. Ն. Իվաննիկոն և Սեմյոն Էսաձեն, արդեն XX դարի սկզբին հիմնականում կրկնում էին Շոպենի մտքերը։

Վերջին, օրինակ, հիմնվելով Կովկասի փոխարքայի դիվանի 1870 թ. գյուղացիական ռեֆորմի շրջանին վերաբերող պաշտոնական գրությունների

[1] Հմմտ. „Колониальная политика...", I, стр. 25.

վրա, Երևանի և Նախիջևանի խանությունների հողատիրության երկու ձևերի՝ մուլքի և թիուլի մասին այն եզրակացության է գալիս, որ դրանք նույն ծագումն ունեն, ինչ որ գերմանական ֆեոդը և լենը, կամ ռուսական ուղելային սիստեմը, «դրանք միայն ֆեոդալական և ուղելային հողատիրության (владение) նման, իրենց հետագա զարգացումը չստացան»։ Եվ իբր թե մի շարք հանգամանքների շնորհիվ «...մուսուլմանական հողային իրավունքների հետագա զարգացումը կանգ առավ բնակեցված հողերի ցմահ կամ ժառանգական տիրապետման աստիճանի վրա, միայն այն իրավունքներով, որ հողատիրոջ օգտին գնա հողային եկամուտի որոշյալ մասը, որը գյուղացիները պարտավոր էին մուծել կառավարությանը կամ գանձարան»[1]։

Ուրիշ խոսքով Ս. Էսաձեն այստեղ մեզ ծանոթ այն միտքն է կրկնում, որ իբր թե մուսուլմանական պետությունների կազմի մեջ դարեր շարունակ մնացած Հայկական մարզում գոյություն չուներ ֆեոդալական կալվածատիրություն հողի մասնավոր սեփականությամբ, չկար այնտեղ նաև գյուղացու անձնական կախում հողատիրոջից և ամրացում հողին, այսինքն՝ չկար ճորտատիրություն, և ցմահ կամ ժառանգաբար հողատիրական իրավունք ստացած կալվածատերերը միայն արտոնություն ունեին գյուղացուց հավաքելու պետական հողային տուրքը։

Իհարկե, ոչ նույն մոտիվներից դրդված, ինչ որ նշեցինք վերևում ցարական իշխանության պաշտոնական ու գրական ներկայացուցիչների նկատմամբ, բայց գրեթե նույն տեսակետներն այդ հարցի վերաբերյալ պաշտպանել են իրենց աշխատությունների մեջ և հայ մամուլում բուրժուական ու, հաճախ ավելի մեծ եռանդով, նարոդնիկական գաղափարներով տոգորված հրապարակախոսները։

Թանոթանանք նրանց դատողություններին էլ, ամեն դեպքում աշխատելով պարզել այն մոտիվները, որ թաքնված են դրանց հիմքում։

Ֆեոդալական-ճորտատիրական հարաբերությունների հարցը հայ լիբերալ նարոդնիկական ինտելիգենցիայի ուշադրության առարկան դարձավ մասնավորապես անցյալ դարի 70-ական թվականների վերջին և 80-ական թվականների ընթացքում, այն կապակցությամբ, որ Անդրկովկասում էլ Ռուսաստանի օրինակով կառավարական շրջաններում քննության էր առնվում գյուղացիական ռեֆորմի լուծում չստացած խնդիրը՝ գյուղացիների հողաբաժնի հետգնման ժամկետի և պայմանների վերաբերյալ։

Գյուղացիության իրավունքների պաշտպանության նպատակով այդ ինտելիգենցիայի ներկայացուցիչները փորձում էին պատմականորեն հիմնավորել հայ գյուղացու իրավունքն իր հողաբաժնի նկատմամբ, առաջ քաշել այն միտքը, որ մինչև Ռուսաստանին միանալը Հայաստանում ֆեոդալական հողատիրություն չի եղել, իսկ ռուսական իշխանության սոցիալական քաղաքականության հետևանքով հայ գյուղացին պարտավորվել է պետության սահմանած չափով միայն տուրքեր վճարել կալվածատիրական իրավունքով օժտված անձանց՝ առանց որևէ անձնական կախում ունենալու նրանցից և առանց իր հողի տերը ճանաչելու նրանց։

Այստեղից այն հետևությունն էր արվում, թե այն, ինչ որ պատահաբար և նույնիսկ նոր կառավարողների սխալով է առաջացել (այդ հանգամանքն էլ էր

[1] *Семен Эсадзе*, Историческая записка об управлении Кавказом, т. I, Тифлис, 1907, стр. 547.

հաճախ շեշտվում), պետք է վերացվի և գյուղացու դարավոր իրավունքներն իր արյուն-քրտինքով մշակած հողի նկատմամբ վերականգնվեն։

«Ի՞նչպես է կազմվել մեր մեջ կալվածատիրական դասը,— դրում է 1881 թ.՝ այդ ժամանակ լիբերալ նարոդնիկական դաղափարներով տոգորված երիտասարդներից մեկը՝ Ալ. Քալանթարը՝ «Մշակ»-ի ապագա խմբագիրը 90-ական թվականների սկզբներին,— ահա՛ կարևոր խնդիր, որի պարզելը մեծ պատմական հասարակական նշանակություն ունի»[1]։

Նա իր դրած հարցին հետևյալ պատասխանն է տալիս. Հայաստանի ու Ադրբեջանի մուլքադարները, բեգերը և այլն մինչև ռուսական տիրապետությունը «այն մտքով կալվածատերեր չէին, ինչպես առհասարակ ընդունում են այս վերջիններին»։ Այդ կատարվեց ցարիզմի օրոք. «Բեգերին ընդունեցին կալվածատերերի տեղը, իսկ այդ կալվածատիրությունը հաստատելու համար բավական էր մի որևէ հին թուրք խաների ժամանակից, իբրև խաների պատվիրանք և հրովարտակ։ Այդտեղից սկսվում են անթիվ չարադործություններ, խաբեբայություններ, որ չեն քննված կատարելապես մինչև այժմ»[2]։

Այդ հարցի մասին նույն ոգով և շատ ավելի որոշակիորեն արտահայտվում է լիբերալ նարոդնիկության մի այլ հետևորդ՝ Ս. Ղորղանյանը։ Նա պնդում է, որ «...պարսից տիրապետության ժամանակ Անդրկովկասում չէ եղել ստրկական իրավունք (крепостное право), խաների, բեգերի, աղալարների և գյուղացու մեջ չէ եղել նույնպես և բուն ավատական (феодальный) հարաբերություն։ Հողը ամբողջապես կազմում էր կառավարության սեփականությունը, իսկ այս վերջինը բաժանում էր հողերը և մինչև անդամ ամբողջ գյուղերը իր պաշտոնյաների մեջ թե՛ որպես ռոճիկ նրանց ծառայության համար, և թե՛ որպես պարգև պետությանը նոցա մատուցած առանձին աշխատությունների համար»[3]։

Հայ բուրժուական տնտեսագետներից ագրարային հարցով գուցե ամենից ավելի հետաքրքրվող Ավ. Արասխանյանը Ռուսաստանի 1861 թ. գյուղացիական ռեֆորմին անդրադառնալով, մեզ ծանոթ միտքն է պաշտպանում, որ Արևելյան Անդրկովկասի, այսինքն՝ Հայաստանի և Ադրբեջանի հողային հարաբերությունները տարբեր են եղել, քան Ռուսաստանինը, նույնիսկ Վրաստանինը։ Ռուսաստանում, նշում է նա ռուս և հայ լիբերալների ընդհանուր ոգով ու տոնով, «...հողային խնդիրը հասունացավ մինչև պետական ամենաառաջնակարգ խնդրի աստիճանը և վերջապես իր արժանավոր լուծումը ստացավ 1861 թվականի փետրվարի 19-ի առ միշտ հիշելի օրվա օրենքով»։ Ապա ավելացնում է, որ ռուսական ձևով հողային հարցը լուծում ստացավ նաև Վրաստանում[4]։ Իսկ Անդրկովկասի մյուս մասերում, «որտեղ դասակարգերը և հողատիրությունը ներկայացնում էին ուրիշ պատկեր, այդտեղ հողային խնդիրը և դոցա հետ կից հողային ռեֆորմները հետևեցին այլ սկզբունքի, մեկը մյուսին հակասող, անհաստատ, գրեթե առանց որոշ ծրագրի, առանց կատարյալ գիտակցության»[5]։

---

[1] «Մշակ», 1881, № 175։

[2] Նույն տեղում։

[3] «Մշակ», 1886, № 136, Ս. Ղորղանյան, Գավառական նամակներ։

[4] Ավետիք Արասխանյան, Հողային խնդիրը Անդրկովկասում, «Մուրճ», 1889, № 9, էջ 1287—1288։

[5] Նույն տեղում։

Մի կողմ թողնելով Արասխանյանի բոլորովին անհիմն բնութագիրը ցարական «հողային ռեֆորմների» մասին, որոնք հակառակ նրա պնդման Արևելյան Անդրկովկասում էլ Ռուսաստանի և Վրաստանի նման կատարվել են շատ որոշակի ծրագրով և «կատարյալ գիտակցությամբ» հետամտել են նույն դասակարգային ու քաղաքական նպատակները, ուշադրություն հրավիրենք բերած ցիտատում նրա արտահայտած այն մտքի վրա, որ այստեղ մեզ այժմ զբաղեցնում է, այն է՝ իբր թե Անդրկովկասի հայկական և ադրբեջանական մասում «...դասակարգերը և հողատիրությունը ներկայացնում էին ուրիշ պատկեր» և իբր թե այդ պատճառով «այդտեղ հողային խնդիրը և դոցա հետ կից հողային ռեֆորմները հետևեցին այլ սկզբունքի»։

Թեև թեթևակիորեն և առանց հիմնավորման, բայց Արասխանյանն այստեղ նույն միտքն է արտահայտում, ինչ որ վերևում հիշված հեղինակները, այն է՝ ֆեոդալիզմ, ֆեոդալական հողային հարաբերություններ, հետևաբար և դրանց համապատասխան դասակարգային հարաբերություններ գոյություն չունեին Արևելյան Հայաստանում մինչև Ռուսաստանին միանալը, այդ պատճառով էլ ցարիզմի ագրարային քաղաքականությունն այդտեղ տարբեր բովանդակություն է ունեցել և տարբեր արդյունքներ տվել, քան, օրինակ, բուն Ռուսաստանում և Վրաստանում։

Որ հենց այսպես պետք է հասկանալ Արասխանյանի հիշյալ դիտողությունը, երևում է նրա հետևյալ դատողություններից, որ վերաբերում են ռուսական օրենքներում Արևելյան Անդրկովկասի պետական (казенный) և տիրունական (владельческий) գյուղացիներին ընդհանուր անունով կոչելուն. «...օրենսդիրը միևնույն անունը տալով երկու կարգի գյուղացիներին,—գրում է նա,— կամեցել է հասկացնել, թե՛ պետական հողերի, և թե՛ կալվածատեր ազնվականների հողերի վրա բնակվող գյուղացիները հավասարապես ազատ գյուղացիներ են և որ թե՛ դատարանի առաջ, թե՛ տուրքերի կողմից նոքա նմանապես հավասար են»[1]։

Տարբերությունն այդ երկու կատեգորիայի գյուղացիների միջև, ըստ Արասխանյանի, իբր թե այն է եղել, որ առաջիններ տուրք են տվել միայն պետությանը, իսկ երկրորդները թե՛ կալվածատերերին, և թե՛ պետությանը, «բայց երկուսի տուրքերն էլ հավասար են»[2]։

Պարզ է, որ նա անտեսում է ֆեոդալական-ճորտատիրական հարաբերությունների առկայությունը Հայաստանում ու Ադրբեջանում նաև ռուսական տիրապետության շրջանում և ոչ մի տարբերություն չի տեսնում կալվածատիրական և պետական գյուղացիության տնտեսական-իրավական դրության մեջ։

Ուստի զարմանալի չէ, որ նա հիմնովին սխալ գնահատական է տալիս ցարիզմի ցայտուն ճորտատիրական քաղաքականությանը, որի օրենսդրական արտահայտություններն էին Նիկոլայ I-ի 1846 թ. դեկտեմբերի 6-ի ռեսկրիպտը և դրա հիման վրա Կովկասի փոխարքա Մ. Ս. Վորոնցովի ջանքերով հրատարակված՝ 1847 թ. ապրիլի 20-ի և դեկտեմբերի 28-ի կանոնադրությունները։

Ըստ Արասխանյանի դուրս է գալիս, որ նշված օրենսդրական ակտերում իբր թե արտահայտված է Վորոնցովի «ազնվապետական խիստ շեշտված ձգտումների» հակառակորդների՝ Բլուդովի, կոմս Պանինի և կոմս Կիսելյովի տե-

[1] Ավ. Առասխանյան, Հողային խնդիրը Անդրկովկասում. «Մուրճ», 1890, № 7, էջ 937։

[2] Նույն տեղում։

ПА-12.302

սակետը, որը «...արդեն գյուղացիներին ազատ դասակարգ ճանաչելու ծրագիրն է, որ արժանացավ բարձրագույն հաստատության ուսկրիպտով առ 6-ն դեկտեմբերի 1846 թվականի, ուղղված Կովկասի փոխարքա իշխան Վորոնցովին, օրենք, որի որոշումները հիմք ծառայեցին 20 ապրիլի 1847 թ. և 28 դեկտեմբերի 1847 թվականի հողային օրենքների՝ գյուղացիների և կալվածատերերի փոխադարձ հարաբերությունների վերաբերյալ...»[1]։

Ակներև է, որ Արասխանյանը, որը գրում էր XIX դարի վերջերին, ո՛չ միայն կրկնում էր ցարական պաշտոնական հեղինակների սխալ դրույթները Արևելյան Անդրկովկասի, մասնավորապես Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների մասին, ոչ միայն ժխտում էր ֆեոդալական-ճորտատիրական կարգերի առկայությունը այնտեղ՝ Ռուսաստանին միանալու նախօրյակին, այլև ամբողջովին սխալ էր ըմբռնում ու մեկնաբանում ցարիզմի ագրարային-գյուղացիական քաղաքականության ընթացքն ու սոցիալական բովանդակությունը սկսած նրա առաջին իսկ քայլերից։

Հայտնի է, որ ռուսական բուրժուական պատմագրությունը մինչև XX դարի սկիզբը նույնպես չէր ըմբռնում, ավելի ճիշտ ժխտում էր ֆեոդալիզմի առկայությունը Ռուսաստանում այնպես, ինչպես այն գոյություն ուներ Արևմտյան Եվրոպայում, կամ միայն պետական-իրավական հարաբերությունների և հաստատությունների մի սիստեմ էր համարում այն, լիովին նույնացնելով արևմտականի հետ։

Հայտնի է նաև, որ ֆեոդալիզմի պրոբլեմը հասարակության զարգացման այլ հարցերի հետ միասին իր գիտական բացատրությունը ստացել է մարքսիզմ-լենինիզմի կլասիկների աշխատություններում, ուստի զարմանալի չէ, որ այդ պրոբլեմի գիտական ուսումնասիրությունը մեզ մոտ սկսված է սովետահայ պատմաբանների, տնտեսագետների և իրավաբանների կողմից, որոնց աշխատությունների քննությանն էլ անցնում ենք։

Մենք նկատի ունենք իրավաբանական գիտությունների դոկտոր պրոֆ. Ա. Եսայանի[2] ուսումնասիրությունը, պատմաբաններ դոցենտ Բ. Մ. Հարությունյանի[3] և պրոֆ. Ի. Պ. Պետրուշևսկու, ապա տնտեսագետներ պրոֆ. Հովհ. Ռումանյանի[5] և Մ. Ադոնցի[6] աշխատությունները։

Այն հարցին, թե ի՞նչ հասարակական-տնտեսական կարգ գոյություն ուներ Արևելյան Հայաստանում Ռուսաստանին միանալու մոմենտին և դրան նախորդող պարսկական տիրապետության երկու հարյուրամյակում, պրոֆ. Ա. Եսայանը հետևյալ պատասխանն է տալիս. «XVII դարի կեսից սկսած և մինչև Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միանալը մուլքադարական իրավունքը

---

[1] Ալ. Արասխանյան, Հողային խնդիրը Անդրկովկասում, «Մուրճ», 1890, № 9, էջ 1193 - 1194։

[2] Проф. *А. М. Есаян*, Мулькадарское право в Армении, изд. Ереванского государственного университета, Ереван, 1948.

[3] *Б. М. Арутюнян*, Крупное монастырское хозяйство в Армении в XVII—XVIII вв., изд. Армфана, Ереван, 1940.

[4] *И. П. Петрушевский*, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI—начале XIX вв., Ленинград, 1949.

[5] Проф. *О. Е. Туманян*, Экономическое развитие Армении, ч. I (1828—1920), Армгосиздат, 1954, Ереван.

[6] *М. А. Адонц*, Экономическое развитие Восточной Армении в XIX веке, изд АН Армянской ССР, Ереван, 1957.

հետզհետե դառնում է խոշոր ֆեոդալական հողատիրության ձևը Հայաստանում, փոխարինելով մինչև այդ գոյություն ունեցած նախարարական հողատիրությանը»[1]։

Եթե վեճ չսկսենք պրոֆ. Ա. Եսայանի հետ Հայաստանում մուլքադարական իրավունքի ձևով «խոշոր ֆեոդալական հողատիրության» հաստատման ժամանակաշրջանի մասին, ապա մի կողմ թողնենք նաև նրա այն պնդումը, որ դա եկավ փոխարինելու «մինչև այդ գոյություն ունեցած նախարարական հողատիրությունը»,— մեզ համար ուշադրության արժանին բերված ցիտատում այն է, որ այդտեղ նշվում է Արևելյան Հայաստանում Ռուսաստանին միանալու մոմենտին ֆեոդալական հարաբերությունների առկայության անկասկածելի իրողությունը։

Անդրադառնալով այն հարցին, թե Արևելյան Հայաստանում ֆեոդալիզմը արդյոք օժտվա՞ծ էր ճորտատիրական գծերով և կարելի՞ է արդյոք խոսել ճորտատիրության մասին այնտեղ, պրոֆ. Ա. Եսայանը հետևյալ եզրակացության է հանգում. «Մուլքադարությունը հարկավոր է դիտել իբրև ճորտատիրության մի հատուկ ձև Արևելքում, որը (մուլքադարությունը —Վ. Ռ.) Արևմուտքի ճորտատիրության համեմատությամբ մի շարք առանձնահատուկ գծեր ուներ, այն է՝ մուլքադարությունը չէր նշանակում գյուղացու ամրացումը հողին, բայց այստեղ «արտատնտեսական ճնշումը» իրականացվում էր գյուղացիների դասային ոչ-լիիրավության հաստատման ձևով, նույնպես և նրանց տարրական ընդհանուր քաղաքացիական իրավունքներից զրկելով, որի շնորհիվ մուլքադարական գյուղացիները (այդ թվում նաև թիուլայինները) իրենց դրությամբ ոչնչով չէին տարբերվում ճորտ գյուղացիներից»[2]։

Այսպիսով պրոֆ. Ա. Եսայանը Արևելյան Հայաստանի ֆեոդալական գյուղացիների երկու կատեգորիաների՝ թե՛ մուլքադարականի, և թե՛ թիուլդարականի մասին այն կարծիքին է, որ թեև նրանք հողին ամրացված չէին, բայց ըստ էության ճորտի վիճակում էին։ Հենց դրա մեջ էլ նա տեսնում է այն տարբերությունը, որ գոյություն ունի Արևմուտքի և Արևելքի ֆեոդալիզմի միջև. «Մուլքադարական և թիուլդարական գյուղացիները,— գրում է նա,— որոշ պայմանների առկայության ժամանակ, կարող էին ազատ կերպով թողնել առաջվա տերերի հողերը և ուրիշների մոտ տեղափոխվել։ Մեզ թվում է, որ հենց սրա մեջ է հարկավոր որոնել արևելյան ֆեոդալիզմի տարբերությունը Արևմուտքի ֆեոդալիզմից, այլ ո՛չ թե այն բանում, որ Արևելքում ընդհանրապես բացակայում էր հողի մասնավոր սեփականության իրավունքը և որ մուլքադարները պետության եկամուտների միայն սոսկ մասնակիցներն էին, ինչպես այդ պնդում են Շոպենը և շատ ուրիշ հեղինակներ»[3]։

Պրոֆ. Ա. Եսայանի կարծիքը գյուղացիների ազատ տեղափոխման իրավունքի մասին կարելի է մասամբ իրավացի համարել այն հիմնական վերապահությամբ միայն, որ ասենք, Արևելյան Հայաստանում գոյություն չունեին գյուղացիների հողին ամրացնելու օրենսդրական ակտեր, ուրիշ խոսքով իրավական ձևակերպման չէր ենթարկված հողին ամրացնելը, բայց ազատ տեղափոխման իրավունքը փաստորեն ֆիկցիա էր՝ իրական կյանքում կալվածատի-

[1] Պրոֆ. Ա. Մ. Եսայան, Նշված աշխ., էջ 3։
[2] Նույն տեղում, էջ 64։
[3] Նույն տեղում, էջ 61։

րոջ ձեռքում եղած տնտեսական ճնշման բազմատեսակ հնարավորությունների առկայության պայմաններում։

Պրոֆ. Ա. Եսայանը բնութագրում է նաև Արևելյան Հայաստանի ֆեոդալական կալվածի երկու տեսակը՝ մուլքը և թիուլը, նշում նրանց տարբերությունները և հանգում հետևյալ ընդունելի եզրակացության. «Մուլքի և թիուլի տարբերությունը համարյա նույնն է, ինչ որ գոյություն ուներ ֆեոդ-ալլոդի և բենեֆիցիայի միջև միջնադարյան Եվրոպայում», կամ վոտչինայի և պոմեստիեի միջև ֆեոդալական Ռուսիայում[1]։

Ընդհանուր առմամբ պրոֆ. Ա. Եսայանի հայացքների մեջ գնահատելին և ընդունելին այն է, որ նա վճռականորեն ժխտում է Ի. Շոպենի և նրանից հետո պաշտոնական կամ կիսապաշտոնական բնույթ ստացած սխալ տեսակետները Արևելյան Հայաստանի տնտեսական-հասարակական կարգի մասին և ճիշտ հետևությունների է հանգում այնտեղ գոյություն ունեցող ֆեոդալական հողատիրության, նրա երկու տեսակի և ճորտատիրական հարաբերությունների փաստական առկայության վերաբերյալ։ Մեր կարծիքով ավելի ճիշտ կլիներ խոսել ճորտատիրության բազմաթիվ տարբերի առկայության մասին։ Բայց այդ հարցին կանդրադառնանք հետո։

Արևելյան Հայաստանի հողատիրության բնույթի մասին Ի. Շոպենի սխալ տեսակետը հիմնական քննադատության է ենթարկված դոցենտ Բ. Մ. Հարությունյանի վերևում հիշված աշխատության մեջ։

Շոպենը Հայկական մարզի մուլքադարների իրավունքների մասին գրում է. «Մուլքադարը չէր կարող իրեն համարել նրան իրև մուլք տրված գյուղի, հողի կամ բնակիչների որևէ մասի տեր (владелец), այլ դրանից ստացված եկամտի սոսկ մասնակիցն էր...։ Ամեն տեսակի անմիջական ազդեցություն գյուղացիների վրա խիստ արգելված էր նրան, իսկ նրա ամբողջ իրավունքը սահմանափակվում էր այն բանով, որ հողի արդյունքների հավաքից հետո նա կարող էր գյուղական սարկյարից (հարկահավաքից։— Վ. Ռ.) պահանջել իրեն հասնող մասը գյուղական ամբարից և մուլքադարական գյուղերից հավաքվող ընդհանուր տուրքը» (податной сбор)։

Բերելով Շոպենի այս դատողությունները՝ Բ. Մ. Հարությունյանը լիովին իրավացի կերպով նշում է. «Էջմիածնի XVII և XVIII դարերի տնտեսության մեջ մուլքային հարաբերությունների ուսումնասիրությունը հիմք է տալիս քննադատաբար վերաբերվելու Ի. Շոպենի տեղեկություններին Երևանի խանության մուլքադարական-հողային հարաբերությունների նկատմամբ»[2]։

Ապա ուշադրություն հրավիրելով այն հանգամանքի վրա, որ Շոպենի սխալի հիմքը տարածված այն մոլոր գրույթն է, որ իբր թե Իրանում, ուրեմն և Արևելյան Հայաստանում կամ Երևանի խանության մեջ հողի մասնավոր սեփականություն չի եղել, որ իբր թե հողը «ամբողջովին, ամենուրեք և առանց բացառության պատկանում էր մենակ շահին, այսինքն՝ պետությանը» (казна)[3],— Բ. Մ. Հարությունյանը հիմնվելով ինչպես այլ ուսումնասիրողների, այնպես էլ իր հետազոտության տվյալների վրա, անում է հետևյալ իրավացի

[1] Պրոֆ. Ա. Մ. Եսայան, Նշված աշխ., էջ 61։
[2] Բ. Մ. Հարությունյան, Նշված աշխ., էջ 29։
[3] Նույն տեղում, էջ 30։

հետևությունը. «Այս ամենը ցույց է տալիս, որ մուլքադարական իրավունքը հիմնվում էր հողային սեփականության վրա»[1]։

«Մուլքային կալվածները վաճառվում էին, օտարացվում էին ընդհանրապես կամ լիովին, կամ մաս-մաս»։ «Մուլքն անցնում էր ժառանգաբար և հաճախ մանր մասերի էր բաժանվում»,— շարունակում է նա, ընդհանրացնելով իր բերած տվյալների արդյունքները[2]։

Պարզ է, որ մուլքադարը ֆեոդալական կալվածատեր է առանց որևէ վերապահության, և նրա իրավունքները գյուղացու նկատմամբ, նրանից մուլք ստանալու գործում բխում են նրա՝ հողի սեփականատեր լինելու իրողությունից։

Բ. Մ. Հարությունյանը քննում է նաև մուլքադարի և գյուղական համայնքի փոխհարաբերությունների հարցը, պարզում համայնքի ու նրա անդամների պարտականությունների և իրավունքների շրջանակը մուլքադարի հանդեպ։ Համայնքը պատասխանատու էր պետության և մուլքադարի առաջ բոլոր պարհակների կատարման համար, իսկ մուլքադարն իր մուլքը վաճառելու դեպքում իրավունք չուներ խախտել համայնքի հողերի ամրողջականությունը, կամ իլել համայնքի անդամի հողը։ Մուլքադարական գյուղում հողերի տնօրինության իրավունքը պատկանում էր համայնքին։ Մուլքադարն իրավունք չուներ խառնըվելու համայնքի ներքին գործերին[3]։

Նույնպիսի փոխհարաբերություն, ըստ Բ. Մ. Հարությունյանի, գոյություն ուներ նաև համայնքի և Երևանի խանության կալվածատիրական մյուս շերտի թիուլիստների կամ թիուլդարների միջև։ Վերջիններիս կալվածատիրական իրավունքը տարբեր էր մուլքադարականից։ Ըստ Ի. Շոպենի թիուլային իրավունքը «տիրողին (владелец) ընդհանրապես իրավունք էր տալիս անմիջականորեն տնօրինություն անել իրեն շնորհված գյուղում, որը միևնույն ժամանակ հանվում էր հարկացուցակից. դրանից հետո այդ գյուղից գանձվող բոլոր տուրքերը, բոլոր պարհակները դրա տիրողին էր տրամադրվում»[4]։

Այդ նշանակում է, որ թիուլիստը գյուղացիներից գանձելու իրավունք էր ստանում ո՛չ միայն մուլքադարին հասնող տուրքերը, այլև պետական հարկերը. այդ պատճառով էլ պետական հարկացուցակից հանվում էին այդպիսի գյուղերը։

Բ. Մ. Հարությունյանը գտնում է, որ թիուլի ծագումը միանման է մուլքի հետ և թիուլը մուլքի մի տեսակն է՝ «այսպես ասած, նրա ընդլայնած հասկացողությամբ», բայց մի էական տարբերությամբ. «Ի տարբերություն մուլքի թիուլային իրավունքը չէր կարելի վաճառել»։ Ավելացնենք մեր կողմից, որ չէր կարելի նաև ժառանգություն թողնել, այն իրրև կանոն ժամանակավոր էր, շատ-շատ ցմահ։

Թիուլի և մուլքի միատեսակ լինելու միտքը կարելի է ընդունելի համարել այն իմաստով միայն, որ երկուսն էլ ֆեոդալական հողային հարաբերություն-

---

[1] Բ. Մ. Հարությունյան, Նշված աշխ., էջ 34։
[2] Նույն տեղում։
[3] Նույն տեղում։
[4] Ի. Շոպեն, Նշված աշխ., էջ 928—929։
[5] Բ. Մ. Հարությունյան, Նշված աշխ., էջ 38։

ներ են նշանակում, սակայն ամեն մեկն իր էական առանձնահատկություններով, ինչպես երևում է վերևի բացատրությունից։

Ինչ վերաբերում է ֆեոդալական հարաբերությունների մեջ երևան եկող ճորտատիրական գծերին, այդ մասին Բ. Մ. Հարությունյանը, ի նկատի ունենալով էջմիածնի տնտեսությունը XVII և XVIII դարերում, նշում է. «Ճորտատիրական հարաբերությունները... երկրում ընդունել էին առավելապես «մուլքադարական» և «թիուլային» հարաբերությունների ձև, որտեղ գյուղացիների պարտականությունները հողի սեփականատիրոջ նկատմամբ արտահայտվում էին ռենտա վճարելու ձևով, որ առավելապես վճարվում էր նատուրայով («բահրա», «մուլք») ու դրամով ու մի աննշան մասով միայն աշխատավճար պարհակների ձևով, իբրև մնացորդ մի ժամանակ աշխատավճար ռենտայի տիրապետող ձևի»։ Այս կապակցությամբ էլ նա շեշտում է գյուղացու «իրավաբանորեն անձնապես ազատ» լինելու հանգամանքը[1]։

Մի այլ առիթով, երբ նա խոսում է էջմիածնի կալվածների և զանազան անշարժ գույքերի մասին Վրաստանում, գրում է. «Ինչպես գրականության մեջ, այնպես էլ արխիվային նյութերում մեր ուսումնասիրած ժամանակաշրջանի համար մենք ո՛չ մի տեղ, բացի Վրաստանից, էջմիածնին պատկանող «ճորտերի» չենք հանդիպում»[2]։ Իսկ այդ «ճորտերի» մասին էլ նշում է, որ դրանք ամրացված չէին հողին կամ տիրոջ տանը, այլ միայն որոշ տուրք էին վճարում տիրոջը և նրանցից անձնական կախման մեջ էին. տերն իրավունք ուներ նրանց վաճառել, նվիրել և փրկանքով ազատ արձակել[3]։

Պարզ է, որ Բ. Մ. Հարությունյանը թե՛ հոգևոր, և թե՛ աշխարհիկ մուլքադարների ու թիուլիստների գյուղացիներին Երևանի խանության շրջանակում ճորտատիրական կախման մեջ չէր համարում, շեշտում էր նրանց «իրավաբանորեն անձնապես ազատ» լինելը և նշում ճորտատիրական կախման միայն որոշ գծերի առկայությունը։

Թեև վերևում շարադրած բոլոր հարցերի վերաբերյալ նա հիմնականում աչքի առաջ ունի XVII և XVIII դարերի էջմիածնի ֆեոդալական տնտեսությունը, բայց նրա եզրակացությունները հավասարապես վերաբերում են Երևանի խանության կամ, այլ ձևով ասած, Արևելյան Հայաստանի ֆեոդալական հարաբերություններին նաև Ի. Շոպենի նկարագրած ժամանակաշրջանում, այսինքն՝ XIX դարի առաջին քառորդում, որովհետև, ինչպես իրավացիորեն նշում է նա, պարսկական վերջին սարդարը «հիմնական բեկում չմտցրեց երկրի հողային հարաբերությունների մեջ»[4]։

Վերջին տարիներում Արևելյան Հայաստանի ֆեոդալական հարաբերությունների հարցը՝ կապված Իրանի և Ադրբեջանի հետ՝ բազմակողմանիորեն, լայն մասշտաբով և մեծ ժամանակաշրջանի ընդգրկումով քննության է առնված Ի. Պ. Պետրուշևսկու աշխատության մեջ, որտեղ հիմնական քննադատության են ենթարկված Ի. Շոպենի, նրա հետևորդների և այլ հեղինակների հայացքները ֆեոդալիզմի ու ճորտատիրության, ֆեոդալական հողատիրության ձևերի ու գյուղացիության դրության մասին։

---

[1] Բ. Մ. Հարությունյան, նշված աշխ., էջ 39։
[2] Նույն տեղում, էջ 92։
[3] Նույն տեղում, էջ 94։
[4] Նույն տեղում, էջ 29—30։

Համառոտակի կանգ առնենք նրա եզրակացությունների վրա, որոնք մեկ հիմնական հարցում մեզ ընդունելի չեն թվում և առանձին դեպքերում էլ առարկությունների առիթ են տալիս։

Նախ՝ մի քանի խոսք ֆեոդալական հողատիրության ձևերի և կալվածատիրական երկու շերտի մասին, որոնք գոյություն ունեին Արևելյան Հայաստանում կամ Երևանի խանության մեջ Ռուսաստանին միանալու նախօրյակին, այսինքն՝ թիուլդարների կամ թիուլիստների և մուլքադարների մասին։

Թիուլի և թիուլդարների մասին Ի. Պ. Պետրուշևսկին խոսում է և մանրամասն քննության է առնում թիուլային իրավունքի պատմական զարգացման և փոփոխությունների ամբողջ ընթացքը սկսած XVI դարից մինչև XVIII դարի վերջը և XIX դարի առաջին քառորդը ինչպես Իրանում, այնպես էլ Ադրբեջանում ու, ըստ իր արտահայտության, Կովկասյան Հայաստանում։ Մեր այստեղ հետաքրքրում է այդ հարցը ոչ իր ամբողջությամբ, այլ միայն XVIII դարի վերջի և հատկապես XIX դարի առաջին քառորդի շրջանակում, այն էլ Արևելյան Հայաստանի նկատմամբ։ Այդ մասին նա գրում է, որ հատկապես XVIII դարում այդտեղ գոյություն ուներ թիուլի մի հատուկ տեսակը, որի էությունն այն էր, որ մուլքադարներին իբրև հատուկ ողորմածություն շահը իրավունք էր տալիս իրենց կալվածների գյուղացիներից հավաքել նաև պետության հասնող ամեն տեսակ տուրքերը։ «Այսպիսով,— շարունակում է Ի. Պ. Պետրուշևսկին,— միևնույն անձը տեր էր դառնում և՛ մուլքին (իբրև կալվածի և իբրև դրանից ստացվող ռենտայի), և՛ թիուլին (որ հասկացվում է այժմ նույնպես ռենտայի փոխված պետական տուրքերի գանձման իրավունք տիրոջի (владелец) օգտին) կամ, ուրիշ խոսքով, այդ անձն իրավունք էր ստանում իր օգտին գանձելու բոլոր տեսակի տուրքերը, ոչինչ չմուծելով պետական դրամարկղ (казна)»։ Այս տեսակի թիուլը սկզբունքով ժառանգական չէր և թիուլդարի սերնդին անցնելու համար հարկավոր էր շահի նոր շնորհում։

Նկատելով ունենալով այս ամենը, Ի. Պ. Պետրուշևսկին ժխտում է Ի. Շոպենի տեսակետը թիուլի իրավունքի մասին, քանի որ նա միայն Երևանի խանության մեջ գոյություն ունեցող «թիուլի զուտ տեղական այլատեսակությունը... սխալմամբ ընդունել է թիուլի ինստիտուտի էության տեղը»։ Ի. Պ. Պետրուշևսկին բերում է Ի. Շոպենի մեջ արդեն ծանոթ բնութագիրը թիուլի մասին, որի համաձայն թիուլային իրավունքը «տիրողին (владелец) ընդհանրապես իրավունք էր տալիս անմիջականորեն տնօրինություն անել իրեն շնորհված գյուղում, որը միևնույն ժամանակ հանվում է հարկացուցակից. դրանից հետո այդ գյուղից գանձվող բոլոր պարհակները դրա տիրողին էին տրամադրում»,— և այդ առթիվ նշում է, որ այս վերջին հնարավորությունը չ՝էր բխում թիուլային իրավունքից, այլ այն հանգամանքից, որ մուլքադարի և թիուլդարի իրավունքը միավորվում էր մեկ անձի մեջ։ Իսկ իրեն շնորհված գյուղում անմիջականորեն տնօրինություն անելու իրավունքը «չէր բխում թիուլի իրավաբանական իրավունքից, այլ տիրողի կողմից կարող էր յուրացվել, այսպես ասած, հայտային կարգով»։

Ի. Պ. Պետրուշևսկին իր հասկացողությունը թիուլի էության մասին՝ դրա զարգացման դանդաղ շրջաններում հետևյալ ձևով է ամփոփում. «Թիուլը

[1] Ի. Պ. Պետրուշևսկի. Նշված աշխ., էջ 207։
[2] Նույն տեղում։
[3] Նույն տեղում, էջ 207—208։

XVI դարում... դեռ խստորեն որոշյալ նշանակություն չուներ և նշանակում էր շնորհումներ զանազան հիմունքներով, որ միավորված էին միայն երկու նշանով՝ այդ շնորհումներն արվում էին ժամանակավորապես և կապված էին որոշ տերիտորիայից գանձվող բոլոր հարկերի կամ դրանց մի մասի յուրացման իրավունքի հետ. այդ տերիտորիան կարող էր լինել թե՛ մի ամբողջ մարզ, և թե՛ մի առանձին գյուղ»[1]։

Թիուլը ըստ նրա մի յուրատեսակ բենեֆիցիա էր, «այդ ձևով էլ ֆեոդալական ինստիտուտ էր, ինչքան որ թիուլ ստացողը՝ թիուլդարը կենտրոնական պետական իշխանության հետ միատեղ մասնակից էր գյուղացիության շահագործմանը, նրանից գանձելով հողային ռենտա, որը դրա հետ միասին պետական հարկերի գլխավոր աղբյուրն էր ծառայում»[2]։

Թիուլի զարգացման հետևյալ շրջանը վերաբերում է XVII—XVIII դարերին։ Այդ շրջանում են ձևավորվում թիուլի երկու տեսակը։

Թիուլի առաջին տեսակն այն է, դրում է Ի. Պ. Պետրուշևսկին, որ խստորեն որոշակի պաշտոնների համար է տրվում։ Թիուլդարը տեր էր մնում ստացած տերիտորիային, քանի որ վարում էր այդ պաշտոնը, իսկ երբ պաշտոնն անցնում էր ուրիշին, դրա հետ միասին նրան էր անցնում նաև թիուլը։ Այս դեպքում թիուլդար լինելու հետ, ըստ երևույթին, «միշտ կապված է նաև թիուլային տերիտորիայի կառավարման իրավունքը»[3]։

Թիուլի երկրորդ տեսակը կապված չէր պաշտոնի հետ և տրվում էր որևէ մեկին անձնապես, իհարկե, նույնպես իրրև վարձատրություն պետական ծառայության համար կամ իրրև պարգև իր վաստակների համար, բայց ստացած տերիտորիան թիուլդարին կառավարելու իրավունք չէր տալիս[4]։

Իհարկե, թիուլդարները օգտագործում էին ամեն մի հնարավորություն իրենց իրավունքներն ու եկամուտներն ընդարձակելու և թիուլն էլ ժառանգական դարձնելու համար[5]։

Այդ ուղղությամբ թիուլդարներն զգալի հաջողություններ ձեռք բերեցին XVIII դարի 2-րդ կեսում և XIX դարի սկզբին։ «Ծառայող ավագանին,— դրում է Ի. Պ. Պետրուշևսկին,— խանություններում ձգտում էր՝ թիուլային իրավունքների ընդլայնման կողքին՝ ինչպես պաշտոնների ժառանգականության, այնպես էլ թիուլների ժառանգականության։ Այսպես ուրեմն, ժառանգականությունը խանություններում սկսում էր ընդհանուր կանոն դառնալ, թեև ճանաչված չէր ընդհանուր օրենքով։ Բախչ գործնականում XVIII դարի 2-րդ կեսին թիուլները, ինչպես և դրանց տերերի պաշտոնները, ոչ-սակավ (թեև դեռևս ոչ միշտ) տրվում էին ժառանգաբար»[6]։

Ի. Պ. Պետրուշևսկու՝ վերևում համառոտակի և շատ ընդհանուր գծերով շարադրված տեսակետը թիուլի և թիուլդարության վերաբերյալ՝ իրրև ֆեոդալական հողատիրության մի տեսակի, նրա մտքերը դրանց զարգացման ընթացքի և տենդենցի մասին, այն է՝ պայմանական հողատիրությունից, յուրատեսակ բենեֆիցիայից ժառանգական հողատիրության կամ լենի (ալոդի) փոխ-

---

1 Ի. Պ. Պետրուշևսկի. Նշված աշխ., էջ 191։
2 Նույն տեղում, էջ 189։
3 Նույն տեղում, էջ 199—200։
4 Նույն տեղում, էջ 200—201։
5 Նույն տեղում, էջ 202։
6 Նույն տեղում, էջ 220։

վելու տենդենցի մասին, մեզ ընդհանուր առմամբ ընդունելի են թվում։ Մանրամասնություններին և վիճելի կետերին կանդրադառնանք, երբ քննության առնենք Արևելյան Հայաստանի հողատիրության սիստեմը Ռուսաստանին միանալու նախօրյակին, երբ, իհարկե, խոսք կլինի թիուլի և թիուլդարների ու նրանց կալվածատիրական իրավունքների մասին։

Այժմ ծանոթանանք Ի. Պ. Պետրուշևսկու մտքերին Արևելյան Հայաստանի ֆեոդալական հողատերերի գլխավոր շերտի՝ մուլքադարների վերաբերյալ։

Ի. Պ. Պետրուշևսկին իրավացիորեն ժխտում է այն տեսակետները, որ Ի. Շոպենը և մյուս ցարական կամ բուրժուական հեղինակները պաշտպանել են ֆեոդալական հողատիրության այս ձևի նկատմամբ։ Քանի որ այդ հեղինակները ինչպես Արևելյան Հայաստանում, այնպես էլ Ադրբեջանում չէին տեսնում ֆեոդալիզմ և ֆեոդալական հողատիրություն, հենց դրանով էլ նրանք զրկվում էին այդտեղ գոյություն ունեցող սոցիալական հարաբերությունները ճիշտ ըմբռնելու ամեն մի հնարավորությունից։ Այսպես, օրինակ, Շոպենը և նրանից հետո շատերը մուլքը դիտել են իբրև հարկերի մի մասը, որ շահը կամ խանը շնորհում էին պետական ծառայողներին իբրև ռոճիկ[1]։

Նույնիսկ Ս. Եղիազարովը, շարունակում է Ի. Պ. Պետրուշևսկին, որը ճիշտ էր հասկանում մուլքի էությունը իբրև հողի ժառանգական մասնավոր կալված (владение), սխալ ձևով տեսնում է «մուլքադարական իրավունքի էությունն այն բանում, որ խաները և սարդարները գյուղեր էին շնորհում ծառայող դասի ներկայացուցիչներին»։ Ս. Եղիազարովի այս խոսքերը, ինչպես ասում է Ի. Պ. Պետրուշևսկին, պարզ ցույց են տալիս, որ նա մուլքի տիրումը կապված է համարում պետական ծառայության հետ[2]։

Մուլքի՝ իբրև ֆեոդալական հողային սեփականության երևան գալը Հայաստանում, Ի. Պ. Պետրուշևսկին հաշվում է XV դարի սկզբից, երբ «հիմնականում ավարտվեց վաղեմի տեղական հայկական ֆեոդալական ավագանու չքացումը։ ...Հայկական հին ավագանու տեղը գրավեցին նվաճողները—մուսուլմանական (թուրքմենական և քրդական) ռազմա-քոչվորական ավագանին։ Այդ պրոցեսը հասցրեց այն բանին, որ Հայաստանում տարածվեցին ֆեոդալական հարաբերությունների «մուսուլմանական» ձևերը... Այդ ժամանակ էլ շարիաթի մուլքային իրավունքը հաստատվեց նաև Հայաստանում»[3]։

Այդ շրջանում մուլքը, իբրև ֆեոդալական հողային սեփականություն, երկու հիմնական նշան ուներ.— 1) դա կարելի էր վաճառել և գնել, ինչպես և ժառանգություն թողնել, 2) դրա տիրումը կապված չէր պետական որոշ պաշտոն վարելու հետ,—նշում է Ի. Պ. Պետրուշևսկին և ավելացնում, որ մուլքի այդ բնորոշ նշանները երևան են գալիս նաև XVI—XIX դարերում[4]։

Սակայն, ինչպես իրավացիորեն նկատում է նա, այս վերջին շրջանում «մուլք» տերմինն ունեցել է զանազան իմաստներ, որոնցից կարելի է նշել հետևյալները։

1. «Մուլք» տերմինը ոչ սակավ դեպքերում կիրառվել է ամբողջ իշխանությունների տերիտորիայի նկատմամբ, եթե դրանք որևէ դինաստիայի ժառանգական սեփականությունն են համարվել։ Այս դեպքում մուլքն ստանում է սեն-

[1] Ի. Պ. Պետրուշևսկի, Նշված աշխ., էջ 222։
[2] Նույն տեղում, էջ 222—223։
[3] Նույն տեղում, էջ 228։
[4] Նույն տեղում, էջ 228—229։

յորիայի նշանակություն դրա հետ կապված բոլոր իրավունքներով և պարտավորություններով շահի հանդեպ[1]։

2. «Մուլք» նշանակում էր խոշոր կամ մանր ֆեոդալական կալված (поместье), որի մեջ մտնում են մեկ կամ մի քանի գյուղեր։ Դրանց ժառանգական սեփականատեր հողատերը սենյոր-կառավարող չէր, այլ սովորական կալվածատեր մուլքադար, որը գյուղացիներից ստանում էր ռենտա մթերքներով և շնչին չափով էլ կոռով։ Նա պարտավոր չէր պետական ծառայություն անել։ Այսպիսի մուլքն ազատորեն գնվում և վաճառվում էր[2]։

3. «Մուլք» նշանակում էր ֆեոդալական սեփականություն ո՛չ միայն հողի, այլև ջրի նկատմամբ. մուլքադարի կալվածով անցնող ջրերից կամ նրա անցկացրած ջրանցքներից օգտվելու համար գյուղացիք պետք է նրան որոշ տուրք տային։ Ուրեմն այս դեպքում գործ ունենք մուլքի հետ իբրև ջրի տիրապետման իրավունքների հետ[3]։

4. «Մուլք» նշանակում էր ռենտա-հարկի այն մասը, որ գյուղացիներից հավաքում էր մուլքադարն իր տիրապետության տակ մուլքի իրավունքով գտնվող գյուղում. ռենտա-հարկի մյուս մասը հավաքում էր պետությունը։ Երևանի և Նախիջևանի խանություններում մուլքադարը շահից կամ տեղական խանից իբրև հատուկ ողորմածություն իրավունք էր ստանում իր օգտին հավաքելու նաև ռենտա-հարկի պետական մասը[4]։

Ը. Պ. Պետրուշևսկու այս կետում նշած մուլքի նշանակությունն այն է, որ մուլքադարը միաժամանակ հանդես է գալիս թիուլդարի իրավունքով, այսինքն՝ գյուղացիներից ստանում է կալվածատիրական ու պետական տուրքերի ամբողջությունը, ինչ որ իրոք Երևանի խանության մեջ քիչ չէր պատահում հենց XIX դարի առաջին քառորդում[5]։

5. «Մուլք» նշանակում էր իր տիրոջը եկամուտ բերող ամեն տեսակ անշարժ գույք, օրինակ՝ պարտեզ, այգի, մեղվանոց, բաղնիք, արհեստանոց։ Այս իմաստով մուլք էին նաև ֆեոդալական գյուղացու այս կարգի բոլոր գույքերը, որ նա կարող էր վաճառել. մուլքադարը ցանկացած դեպքում միայն կարող էր առաջին հերթին ինքը գնել այն, բայց վաճառքն արգելել չէր կարող, իսկ գույքի նոր տերը պարտավոր էր կատարել մուլքադարի բոլոր պարհակները[6]։

6. Վերջապես «մուլք» էին կոչվում նաև գյուղական համայնքի հողերը, եթե այդ համայնքի անդամները դեռ ճորտացված չէին։ Իսկ այդպիսի փոքրաթիվ համայնքներ Հայաստանում և Ադրբեջանում XVI—XVII դարերում գոյություն ունեին[7]։

Այս ամենից հետո Պետրուշևսկին առարկում է այն սխալ տեսակետի դեմ, որ մուլքի և թիուլի մասին զարգացրել են ցարական պաշտոնական աղբյուրները և այլ հեղինակներ, այն է՝ իբր թե ֆեոդալական հողատիրության այդ երկու տեսակը գոյություն են ունեցել միայն Երևանի և Նախիջևանի խանություններում, և ցույց է տալիս, որ դրանք կային նաև Անդրկովկասի մյուս

1 Ի. Պ. Պետրուշևսկի. Նշված աշխ., էջ 229-230։
2 Նույն տեղում, էջ 230-231։
3 Նույն տեղում, էջ 231։
4 Նույն տեղում, էջ 231—232։
5 Նույն տեղում, էջ 238։
6 Նույն տեղում, էջ 230։
7 Նույն տեղում, էջ 232։

խանություններում։ «Կարճ ասած, մուլքն անդրկովկասյան բոլոր խանություններում տարածված ինստիտուտ էր»,— եզրակացնում է նա։

Բոլորովին անհիմն են այն կարծիքները, թե մուլքը ռենտա-հարկի մի մասն էր միայն և պետական ծառայության համար տրվող ռոճիկի մի տեսակը, ընդհակառակը, դա հիմնովին տարբերվում է թիուլային ֆեոդալական հողատիրությունից հենց այն բանով, որ պետական ծառայության հետ կապված չէ, վաճառվում է և ժառանգաբար անցնում մուլքադարի սերնդին[2]։

Թիուլի և մուլքի մասին Ի. Պ. Պետրուշևսկու հայացքները շարադրելիս արդեն նշել ենք, որ հիմնականում ընդունելի ենք համարում նրա քննադատությունը՝ ուղղված Ի. Շոպենի և ցարական ու բուրժուական այլ հեղինակների հասկացողությունների դեմ։

Սակայն չենք կարող հիմնավորված համարել նրա այն տեսակետը, որը վերաբերում է ֆեոդալական գյուղացիության ճորտատիրական կախման մեջ գտնվելուն, որին անդրադառնում է նա իր աշխատության մեջ զանազան առիթներով։

Վերևում արդեն, երբ խոսք եղավ այն մասին, որ մուլք էին կոչվում նաև գյուղական համայնքների հողերը, բերեցինք Ի. Պ. Պետրուշևսկու այն դիտողությունը, թե «Հայաստանում և Ադրբեջանում XVI—XVII դարերում գոյություն ուներ դեռ չճորտացված գյուղական համայնքների մի փոքր թիվ»[3]։

Մի այլ առիթով նա գրում է. «Թե ինչպիսի ծագում ունեն ազատ գյուղացի-համայնիկները և նրանց մուլքերը Ադրբեջանում և Հայաստանում XVI—XVIII դարերում, առայժմ դժվար է ասել։ Անկասկածելի է մի բան, որ նույնիսկ XIX դարի սկզբին ադրբեջանական և հայկական ոչ ամբողջ գյուղացիությունն էր ճորտացված» (закрепощено)[4]։

Ի. Պ. Պետրուշևսկու այս պնդումները կասկած չեն թողնում այն մասին, որ նա XVI դարից սկսած մինչև XIX դարի կեսերը, այսինքն մինչև Հայաստանի և Ադրբեջանի միացումը Ռուսաստանին, այդ երկրներում տեսնում է ճորտատիրական հարաբերությունների բացարձակ տիրապետում, քանի որ XVI—XVII դարերի կապակցությամբ նա խոսում է «դեռ չճորտացված գյուղական համայնքների մի փոքր թվի» մասին միայն, իսկ XIX դարի սկզբի համար գտնում է, որ «նույնիսկ» այդ ժամանակ «ադրբեջանական և հայկական ոչ ամբողջ գյուղացիությունն էր ճորտացված»։ Բնորոշ է նաև այն, որ XVI—XVIII դարերի համար «ազատ գյուղացի-համայնիկների և նրանց մուլքերի» ծագումն է դժվար լուծելի թվում նրան, քանի որ նրա կարծիքով XIII—XV դարերի շրջանում Ադրբեջանում և Հայաստանում տեղի էր ունեցել ոչ միայն «ֆեոդալական զարգացման պրոցեսի ավարտումը», այլև «գյուղացիների ամրացումը հողին»[5]։

Այս բոլոր վճռական պնդումներից հետո Ի. Պ. Պետրուշևսկին նաև այսպիսի խոստովանություն է անում. «Մեզ չի վիճակվել փաստաթղթերում հանդիպելու ադրյուրների ուղղակի տվյալների՝ Ադրբեջանում և կովկասյան Հա-

[1] Ի. Պ. Պետրուշևսկի, նշված աշխ., էջ 240—241։
[2] Նույն տեղում, էջ 241։
[3] Նույն տեղում, էջ 232։
[4] Նույն տեղում, էջ 240։
[5] Նույն տեղում, էջ 88։

յաստանում ռահաթների հողին ամրացնելու մասին XVI—XVII դարերի շրջանում»[1]։

Այսպիսի հանդամանքներում նրա ամբողջ դրույթները ինչպես ինքն էլ է նշում, հիմնված են XVII դարի «նարրատիվ աղբյուրների» այն «մի շարք անուղղակի մատնանշումների վրա», թե մոնղոլական տիրապետության էպոխայի «հիմնական պարհակները, նույնպես և գյուղացիների ամրացումը հողին պահպանվել են նաև ղզլբաշների պետության մեջ»[2], այսինքն Իրանում և նրա տիրապետության տակ անցած Ադրբեջանում և Արևելյան Հայաստանում։

Բերելով այդ «մի շարք անուղղակի մատնանշումները», Ի. Պ. Պետրուշևսկին XVIII դարի և XIX դարի առաջին քառորդի մասին հետևյալ դիտողությունն է անում. «XVIII դարի և XIX դարի սկզբի (մինչև անդրկովկասյան խանությունների միացումը ցարական Ռուսաստանին), տեղական դոկումենտալ աղբյուրներում մենք նույնպես մատնանշումներ ենք գտնում—ընդորում դրանցից մի քանիսը ավելի որոշակի են, քան հենց նոր բերվածները նարրատիվ աղբյուրներից—որ կիսանկախ խանություններում էլ գյուղացիք ազատ տեղափոխման իրավունքից չէին օգտվում»[3]։

Քննության շառնենք նրա բերած վկայություններն աղբյուրներից և այն բացատրությունները, որ նա տալիս է դրանց։ Հարցի մանրամասն քննությունը թողնելով ֆեոդալիզմի պատմությամբ զբաղվող մասնագետներին, մենք մեր դիտողությունները կանենք Ի. Պ. Պետրուշևսկու տեսակետի մասին՝ հատկապես աչքի առաջ ունենալով իրերի դրությունը Արևելյան Հայաստանում ռուսական իշխանության հաստատման նախօրյակին, և հենց այն եզրակացությունները, որոնց նա հանդում է իր իսկ բերած նյութերի վերլուծման հետևանքով։

Նախ բերենք նրա եզրակացությունները. «Վերևում բերած բոլոր տվյալները մեզ համոզում են այն բանում, որ մինչոնոլյուցիոն էպոխայի կովկասագետների հաջող նախաձեռնությամբ տարածված կարծիքը, որ իբր թե գյուղացիների ամրացումը հողին գոյություն ուներ միայն Վրաստանում, բայց ոչ Հայաստանի և Ադրբեջանի խանություններում, ճիշտ չէ»[4]։ Այդ սխալ կարծիքի հիմքը XIX դարի ցարական չինովնիկների խիստ խճճած նյութերն են, և այդ կարծիքը հերքվում է ավելի վաղ ժամանակի փաստաթղթերով,— շարունակում է նա ու դրանց հիման վրա անում հետևյալ երկու հետևությունը. «1. Անդրկովկասյան խանություններում գյուղացիների ամրացումը հողին, ավելի ճիշտ խարաջին և պարհակներին, որոնք հավաքվում էին տվյալ վայրից, գոյություն ուներ, կամ, առնվազն, ֆեոդալական իշխանությունները համառ փորձեր էին անում հասնելու այդպիսի ամրացման։ 2. Պաշտպանելով այդ ամրացումն իրենց խանությունների սահմաններում, անդրկովկասյան խաները միևնույն ժամանակ, իրենց և իրենց ենթակա բեկերի շահերի համար, խրախուսում էին ռայաթների և իլյաթների (քոչվորների.— Վ. Ռ.) փախուստը հարևան խանություններից, նրանց հող էին տալիս և հաճախ հրաժարվում էին փախստականներին հանձնելուց»[5]։

---

[1] Ի. Պ. Պետրուշևսկի, Նշված աշխ., էջ 252։
[2] Նույն տեղում։
[3] Նույն տեղում, էջ 256։
[4] Նույն տեղում, էջ 262։
[5] Նույն տեղում։

Ուշադրություն հրավիրենք նաև հետևյալ դիտողության վրա. «Ֆեոդալական հարաբերությունները մուսուլմանական խանություններում, իրոք, այն բանով են տարբերվում վրացական ճորտատիրությունից, որ առաջիններն օրենսդրության մեջ այն արտացոլումը չգտան, ինչ ստացան երկրորդները...»[1] և այլն։

Ի. Պ. Պետրուշևսկու այս բոլոր եզրակացությունները և հետևությունները, մեր կարծիքով, հենց գալիս են ապացուցելու այն, ինչի դեմ վիճում է, այսինքն՝ հենց այն, որ իրոք Արևելյան Հայաստանում ու Ադրբեջանում ֆեոդալական գյուղացու ամրացումը հողին իրրև կանոն գոյություն չուներ, ուրեմն ճորտացման գոյության մասին նույնպես անկարելի է խոսել, այլ կար միայն հողին ամրացնելու և ճորտացնելու գյուղացու անձի վրա գրեթե անսահմանափակ իրավունք հաստատելու այս կամ այն հաջողությամբ կիրառվող ձգտում կալվածատիրական շերտերի կողմից։ Ուրիշ խոսքով՝ Արևելյան Անդրկովկասի ֆեոդալական կալվածատիրական տնտեսությունը, իհարկե, օժտված էր ճորտատիրական հարաբերությունների զգալի տարրերով և այդ հենց այն ժամանակաշրջանում, երբ տեղի ունեցավ նրա միացումը Ռուսաստանին։

Այս իմաստով, իհարկե, լիովին իրավացի է նա, երբ վճռականորեն ժխտում է մինչռևոլյուցիոն շատ պատմաբանների կամ, ինչպես ինքն է արտահայտվում՝ կովկասագետների տեսակետը Արևելյան Անդրկովկասում իրր թե ֆեոդալական-ճորտատիրական հարաբերությունների բացակայության մասին։ Բայց այդ նույնը Ի. Պ. Պետրուշևսկու նման արել են նաև մյուս սովետական պատմաբանները, երբ անդրադարձել են այդ հարցին։ Այս պատճառով, երբ նա այդ կովկասագետների շարքում է դասում նաև որոշ սովետական պատմաբանների, նրա հետ ոչ մի դեպքում համաձայնել չի կարելի։

Այսպես, օրինակ, երբ նա անդրադառնում է Ադրբեջանում ու Հայաստանում գյուղացիների՝ հողին ամրացած լինելու և ֆեոդալական-ճորտատիրական հարաբերությունների գոյության հարցերին և նշում է, որ մինչռևոլյուցիոն կովկասագետների մեծամասնությունը (Ս. Էսաձե, Մ. Կուչև, Ս. Ավալիանի և ուրիշներ) բացասական պատասխան էր տալիս այդ հարցերին, ապա դրանից անմիջապես հետո ավելացնում է. «Այս նույն տեսակետն է արտահայտել մինչև ամենավերջին ժամանակները նաև սովետական կովկասագետների մի մասը»։

Ե. Ա. Մորոխովեցի հետ միասին նա նշում է նաև Բ. Մ. Հարությունյանին և նրա մեզ արդեն ծանոթ աշխատությունը։ Տեսնենք օրինակ, հիշյալ հարցերի մասին ինչ է գրում Բ. Մ. Հարությունյանն իր գրքի հենց նույն էջերում, որը հիշատակում է Ի. Պ. Պետրուշևսկին։

«Գյուղացիությունը, մահմեդական դավանության սկզբունքների համաձայն, անձնապես ազատ էր համարվում։ Գյուղացին առանց հողի չէր կարող վաճառքի առարկա լինել։ Նա իրավունք ուներ հողը՝ իր տիրոջ կալվածը (владение) թողնել և այլ վայր տեղափոխվել»[3]։

---

[1] Ի. Պ. Պետրուշևսկի, Նշված աշխ., էջ 263։
[2] Նույն տեղում, էջ 249։
[3] Բ. Մ. Հարությունյան, Նշված աշխ., էջ 19։

Խոսքն այստեղ այն մասին է, որ գյուղացու անձնական ազատությունն օրենսդրական կամ իրավարանական եղանակով կաշկանդված չէր, նա «անձնապես ազատ էր համարվում» և հողին էլ ամրացված չէր։ Ցույց հենց այն հանգամանքը, որ նա կարող էր թեկուզ հողի հետ միասին վաճառքի առարկա լինել, ցույց է տալիս նրա կախումն իր կալվածատիրոջից և այդ կախման ֆեոդալական-ճորտատիրական բնույթը, բայց նրա վրա ծանրացած ֆեոդալական ճնշումը դեռ ձևականորեն նրան չէր զրկել տեղափոխման հնարավորությունից, քանի որ դրա համար կալվածատերը իրավական հենարան էլ չուներ օրենսդրության մեջ։ Այստեղ խոսքը վերաբերում է ֆեոդալական գյուղացու ազատ համարվելու, ազատ տեղափոխվելու ձևական, օրենսդրական իրավունքին, որովհետև, երբ Բ. Մ. Հարությունյանն անցնում է այն հարցին, թե փաստապես, իրականության մեջ, օրինակ, Արևելյան Հայաստանի գյուղացին ինչպես էր կարողանում օգտվել իր այդ իրավունքներից, այսինքն իրոք ի՞նչ փոխհարաբերություններ գոյություն ունեին կալվածատիրոջ և նրա գյուղացու միջև, այդ ժամանակ նա գրում է. «Սակայն գյուղատնտեսության ոլորտից դուրս աշխատանքի շուկայի և գյուղատնտեսությունից դուրս բանվորական ուժի գործադրման հնարավորությունների բացակայությունը կամ չափազանց նեղ շրջառումը (оxват) ապրուստի միջոցներ հայթայթելու համար գյուղացիությանը հարկադրում էր ամուր նստել հողի վրա, իսկ գյուղերի ավերման և պատերազմի հետևանքով տնտեսության խորտակման դեպքում մտնել այս կամ այն հողատիրոջ լծի տակ։ Այս՝ մի կողմից։ Մյուս կողմից՝ խաների, բեկերի և մյուս զորեղների ուղղակի, անօրինական բռնությունը գյուղացուն ստիպում էր աշխատել իրեն ճորտ, թեկուզ և օրենքով անձնական ճորտացում չէր սահմանված»[1]։

Մի՞թե այս բոլորը նշանակում է, թե Բ. Մ. Հարությունյանը մինչռևոլյուցիոն կովկասագետների նման ժխտում է ֆեոդալական-ճորտատիրական հարաբերությունների և գյուղացիների հողին ամրացնելու իրողությունն Արևելյան Անդրկովկասում։ Ճիշտ է միայն մի բան, որ նա այդ երևույթների գոյությունն այնպես չի հասկանում, ինչպես Ի. Պ. Պետրուշևսկին։ Բ. Մ. Հարությունյանը մերժում է այն գրույթը, որ, օրինակ, Երևանի խանության մեջ գյուղացուն հողին ամրացնելը և նրա ճորտացումը այնպիսի օրենսդրական և իրավարանական ձևակերպում էր ստացել ինչպես, ասենք, Վրաստանում և խոսում է միայն այդ երևույթների շոշափելի փաստական գոյության մասին, միաժամանակ նշելով, թե ի՞նչ պատճառներով էր պայմանավորված այն, իսկ Ի. Պ. Պետրուշևսկին ըստ էության հիշյալ հարցերում տարբերություն չի տեսնում Արևելյան Անդրկովկասի և Վրաստանի գյուղացիության թե՛ իրավական, և թե՛ փաստական դրության միջև։

Ավելացնենք նաև, որ Ադրբեջանի նկատմամբ նույն տեսակետն է պաշտպանում պրոֆ. Ս. Ադալյանն իր աշխատություններում, ի միջի այլոց՝ Ադրբեջանի գյուղացիական ռեֆորմին նվիրած իր մենագրության մեջ։

Այդ աշխատության գծատակի ծանոթագրություններից մեկում, օրինակ, նա գրում է. «Հարկավոր է նշել, որ գիտական գրականության մեջ Ադրբեջանում ճորտատիրության գոյության հարցը, սկսած միջին դարերից, ամենից ավելի հիմնավորված ձևով լուսաբանված է պրոֆ. Ի. Պ. Պետրուշևսկու և Ադրբ-

[1] Բ. Մ. Հարությունյան. նշված աշխ., էջ 20։

բեջանի ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Ա. Ալի-զադեի աշխատություններում»[1]։

Նկատենք մեր կողմից, որ պրոֆ. Մ. Աղայանը, անկախ այդ հեղինակներից, տարիներ շարունակ պաշտպանում է այդ տեսակետն ամբողջ Արևելյան Անդրկովկասի մասին։ Այդ պատճառով էլ ինչ որ ներքևում ասվում է Ի. Պետրուշևսկու մասին, վերաբերում է նաև պրոֆ. Մ. Աղայանին։

Անդրադառնալով այդ նույն հարցին, բայց ի նկատի ունենալով ոչ այն պատմական ժամանակաշրջանն իր ամբողջությամբ, ինչ որ Ի. Պ. Պետրուշևսկին և Բ. Մ. Հարությունյանը, այլ միայն XIX դարի առաջին քառորդը և այն էլ միայն Արևելյան Հայաստանի տերիտորիան, մենք էլ այն եզրակացության ենք հանգել, որ այդտեղ գործ ունենք ֆեոդալական-ճորտատիրական հարաբերությունների զարգացման այն աստիճանի հետ, երբ գյուղացու հողին ամրացնելը և նրա անձնական կախումը կալվածատիրոջից, այսինքն՝ ճորտացումը, չէին ընդունել այն բովանդակությունը և մասշտաբը, ինչ տեսնում ենք Վրաստանում, որտեղ ճորտատիրական իրավունքը գրեթե Ռուսաստանի այդ ժամանակի դրությունն էր հիշեցնում։ Վիճելով Շոպենի և նրա ուղիով գնացող հեղինակների հետ, քննադատելով ցարական իշխանության պաշտոնական ներկայացուցիչների տեսակետը, մենք այն միտքն ենք պաշտպանել, որ Երևանի և Նախիջևանի խանություններում, մինչև դրանց միացումը Ռուսաստանին, շատ շոշափելի չափով երևան են գալիս ճորտատիրական հարաբերությունների բազմաթիվ տարրեր, թեև այնտեղ գոյություն չուներ ճորտատիրական իրավունք իր օրենսդրական լրիվ ձևակերպումով, հետևաբար չկար գյուղացու լրիվ ամրացումը հողին և կալվածատիրոջ լրիվ իշխանությունը գյուղացու անձի վրա, կամ ճորտացումն իր իրավական արտահայտությամբ։

Այսպես, օրինակ, քննության առնելով Ի. Շոպենի տվյալները Հայկական մարզի (նախկին Երևանի խանություն) հասարակական հարաբերությունների բնույթի մասին, մենք գրում ենք. «Այստեղ կարևոր և ճիշտ է այն, որ Հայկական մարզում հողերի տերերը նույն ֆեոդալներն են, կարևոր է այն, որ ճիշտ է նշված հողատիրության ֆեոդալական բնույթը։ Այս հատկապես կարևոր է ընդգծել, որովհետև Շոպենն ինքը և նրանից հետո շատ պաշտոնական պատմաբաններ անվերջ պնդում էին,—այդպես էր նաև պաշտոնական տեսակետը,— որ Արևելյան Անդրկովկասում, այսինքն՝ Հայաստանում և Ադրբեջանում ֆեոդալական հողատիրություն չի եղել, կամ չի ծավալվել, իսկ ճորտատիրության մասին ավելորդ է խոսել...»[2]։

Երևանի խանության հասարակական հարաբերությունների համառոտ բնութագիրը տալով, մենք գալիս ենք հետևյալ եզրակացության. «Դժվար չէ համոզվել, որ Երևանի խանության սոցիալական հարաբերությունները... բավականաչափ հարուստ են ֆեոդալական-ճորտատիրական գծերով»[3]։

Ֆեոդալական գյուղացիության առանձին շերտերի (օրինակ՝ ռաչրարների) մասին խոսելով, նրանց վրա ծանրացած տուրքերը և պարտականները նշելով, մենք գտնում ենք, որ նրանք քիչ բանով էին տարբերվում ճորտերից, քանի որ

[1] *Ц. П. Агаян.* Крестьянская реформа в Азербайджане в 1870 году, изд. АН Азербайджанской ССР, Баку, 1956, стр. 134.

[2] *В. Ритуни.* Крестьянская реформа в Армении в 1870 г., изд. АН Армянской ССР, Ереван, 1947, стр. 43.

[3] Նույն տեղում, էջ 49-50։

«տեղափոխման ձևական հնարավորությունը և փաստական ճորտական կախումը» հենց այդ են վկայում[1]։

XIX դարի առաջին քառորդի և Ռուսաստանին միանալու առաջին տարիների սոցիալական հարաբերությունների էության մասին մեր դիտողությունները ամփոփում ենք հետևյալ ձևով. «Այսպես է ֆեոդալական հարաբերությունների պատկերը, այսպես են ճորտատիրության ոչ փոքրաթիվ տարրերը Հայաստանում մինչև Ռուսաստանին միանալը և դրանից հետո առաջին տարիներում»[2]։

Ուշադրությամբ ծանոթանալով Ի. Պ. Պետրուշևսկու բերած փաստական նյութերին և դրանց հիման վրա կատարած հետևություններին՝ մասնավորապես ա՛յն ժամանակաշրջանի և այն տերիտորիայի մասին, որով մենք զբաղվում ենք և որի մասին կարող ենք մեր կարծիքը հայտնել, գտնում ենք, որ նրա աշխատությունը հիմք չի տալիս վերանայելու մեր տեսակետը Արևելյան Հայաստանի կամ Երևանի խանության ֆեոդալական-ճորտատիրական հարաբերությունների բնույթի մասին, հատկապես գյուղացիների հողին ամրացված լինելու և նրանց անձնական կախման աստիճանի՝ ճորտացման վերաբերյալ։

Այժմ անցնենք մեր տնտեսագետների հայացքներին՝ վերևում քննության առնված հարցերի նկատմամբ։

Նախ մի քանի խոսք պրոֆ. Հովհ. Թումանյանի տեսակետի մասին։ Ինչպես երևում է հարցի շատ համառոտ շարադրանքից, նրա համար գոյություն չունի մեր քննության ենթակա պրոբլեմը և դրա շուրջը ծագած դիսկուսիան սովետական հեղինակների միջև։ Նա չի հիշատակում նաև մինչսովետական և սովետական ուսումնասիրողների միջև գոյություն ունեցող էական տարաձայնություններն այդ պրոբլեմի շուրջը, այլ միայն տալիս է հարցի իր ըմբռնման դրական շարադրանքը։

Ահա՛ դրա էությունն իր իսկ բառերով. «Արևելյան Հայաստանում բոլոր հողերի և ջրերի գերագույն սեփականատերը հանդիսանում էր Իրանի շահը, որն իր հայեցողությամբ հողեր էր տալիս խաներին։ Իսկ խաներն իրենց հերթին որոշ քանակի գյուղեր էին տալիս բարձր դասի իրենց պաշտոնյաներին մուլքի կամ թե թիուլի իրավունքով։ Գյուղացիների և հողատերերի արտադրական հարաբերությունները բնութագրվում էին իբրև ճորտերի և կալվածատերերի հարաբերություններ»[3]։

Այսպիսով, ըստ պրոֆ. Թումանյանի, դուրս է գալիս, որ մուսուլմանական օրենքով երկրի ամբողջ հողը շահի սեփականությունը լինելու իրավաբանական ֆիկցիան անկասկածելի իրականություն է։ Խանական խոշոր հողատիրության առաջացումը կապվում է միայն շահի շնորհի հետ, իսկ մուլքադարական և թիուլդարական հողատիրության ծագումն էլ խանական պաշտոնյաներին հող բաժանելով է բացատրվում։

Ուրեմն պրոֆ. Թումանյանը հնարավոր է համարում այս հարցերում առանց որևէ վերապահության համաձայնել Ի. Շոպենի տեսակետին։

---

[1] *В. Ратуни*, Крестьянская реформа в Армении в 1870 г., стр. 57—58.

[2] Նույն տեղում, էջ 65։

[3] Проф. *О. Е. Туманян*, Экономическое развитие Армении, ч. I, Айпетрат, 1954, стр. 7.

Դրանից հետո նա Արևելյան Հայաստանի տնտեսական կարգը համարում է ճորտատիրական, այսինքն ընդունում է Ի. Պետրուշևսկու հայացքը։

Բայց հայտնի է, որ Ի. Շոպենը ելակետ ունենալով հենց իր տեսակետն Իրանի հողատիրության բնույթի մասին, ժխտում էր Երևանի խանության մեջ մուլքադարների և թիուլգարների ոչ միայն ճորտատիրական, այլև սոսկ ֆեոդալական իրավունքները դյուղացիության նկատմամբ։

Իսկ Ի. Պետրուշևսկին Ի. Շոպենի տեսակետը Իրանի հողատիրության բնույթի մասին ժխտելով է, որ հիմնավորում է իր ըմբռնումը նաև Երևանի խանության մեջ ճորտատիրության տիրապետման վերաբերյալ։

Թե պրոֆ. Թումանյանը ինչպես է հաշտեցնում այս երկու հեղինակների հայացքների ակներև հակասությունները և նրանց՝ փոխադարձաբար պայմանավորված մտքերից մի մասն ընդունում, մյուսը՝ մերժում, այս մասին նա ոչինչ չի ասում։

Ապա քաղվածքներ բերելով Երևանի նախկին խանության թիուլիստներից մեկի որդու խնդրագրից նրա պապերի ու հոր կալվածատիրական իրավունքների մասին, առանց այդ դոկումենտի որևէ քննադատության, առանց նշելու ժամանակը, ո՛ւմ ուղղված լինելը, ի՛նչ առթիվ գրված լինելը և այլն, նշում է, որ այդ փաստաթուղթը տալիս է Երևանի խանության ֆեոդալական հարաբերությունների բավական լրիվ բնութագիրը[1]։

Եվ դրանից հետո այսպիսի եզրակացության է հանդում. «Այսպիսով, մուլքադարները և թիուլգարները փաստապես հանդիսանում էին նրանց տրված հողերի սեփականատերերը և իրանական ֆեոդալների բռնակալական քաղաքականության անմիջական անցկացնողները[2]։

Բայց չէ՞ որ ինչպես մինչսովետական, այնպես էլ սովետական գիտական գրականության մեջ, թեև տարբեր տեսակետներով ու հիմունքներով, բայց ապացուցված ակներև իրողություն է համարվում, որ մուլքադարական և թիուլգարական հողատիրությունը ֆեոդալական հողատիրության տարբեր տեսակներ են, որ մուլքադարական հողատիրությունն ամենևին կապ չունի ծառայության հետ, դա հողի ֆեոդալական այն սեփականությունն է, որ ժառանգաբար անցնում է կալվածատիրոջ սերնդին, կարող է վաճառվել, կտակով տրվել և այլն, իսկ թիուլգարական հողատիրությունն իր մի քանի ձևերով Երևանի խանության մեջ ո՛չ իրավապես, ո՛չ էլ, իբրև կանոն, փաստապես մասնավոր սեփականություն չէր, ժառանգաբար չէր անցնում, չէր կարող վաճառվել, կտակվել և այլն։

Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական իրադրությանը վերաբերող գլխի եզրակացությունների մեջ պրոֆ. Թումանյանը նույն ոգով է ձևակերպում իր ասելիքը նշված հարցերի շուրջը. «Հողը, իբրև արտադրության հիմնական միջոց, բաժանված էր սարդարի և նրա չինովնիկների միջև, որոնք կոչվում էին մուլքադարներ և թիուլգարներ։ ...Հողատիրության երեք տեսակը իշխող դասակարգի համար լիովին ապահովում էին ֆեոդալական դեսպոտիզմի շահագործման իրագործումը»[3]։

---

[1] Проф. *О. Е. Туманян.* Экономическое развитие Армении. ч. I, стр. 7.
[2] Նույն տեղում, էջ 9։
[3] Նույն տեղում, էջ 22։

Այստեղ էլ, ըստ պրոֆ. Թումանյանի, մուլքադարները և թիուլդարները հանդես են գալիս իբրև սարդարի չինովնիկներ, այստեղ էլ, թեև խոսվում է «ֆեոդալական դեսպոտիզմի և գյուղացիների շահագործման» մասին, բայց անտեսվում են գյուղացիների ճորտացման, այսինքն հողին ամրացնելու և նրանց անձի վրա կալվածատիրոջ ունեցած իրավունքի չափի կամ գյուղացու իրավական կախման աստիճանի հարցերը, այսինքն այն հարցերը, որոնք լուծում են պահանջում և որոնք քննության առարկա են սովետական պատմական, տնտեսագիտական և իրավաբանական գրականության մեջ, բայց դժբախտաբար վրիպել են նրա ուշադրությունից։

Շատ ավելի հանդամանորեն հաշվառելով սովետական պատմական ուսումնասիրությունների արդյունքները, հարկավոր քննադատական մոտեցում երևան բերելով դեպի ցարական կիսապաշտոնական հեղինակների և բուրժուական պատմաբանների տեսակետները, Արևելյան Հայաստանի ֆեոդալական-ճորտատիրական հարաբերությունների հարցին անդրադառնում է Մ. Հ. Ադոնցը[1]։

Նշված աշխատության առաջին բաժնի հատկապես երկրորդ և երրորդ գլուխներում նա գանգան առիթներով պարզում է իր ըմբռնումները մեր կողմից քննվող հարցերի շուրջը և հիմնականում ընդունելի դիրք է գրավում։

Նա իրավացիորեն մերժում է Ի. Շոպենից մինչև Վ. Իվանենկո մինչսովետական այն բոլոր հեղինակների տեսակետը, որոնք իբրև կանոն գտնում էին, որ Իրանի նման Արևելյան Անդրկովկասում էլ, ուրեմն և Արևելյան Հայաստանում գոյություն չուներ հողի մասնավոր սեփականություն, որ իբրև թե հողը, ինչպես, օրինակ, գրում էր Ի. Շոպենը, «ամբողջովին, ամենուրեք և առանց բացառության պատկանում էր մենակ շահին, այսինքն պետությանը»։ Հենց այս հիման վրա էլ, նշում է Ադոնցը, «նրանք ժխտում էին Պարսկաստանի նախկին տիրապետություններում ճորտատիրության գոյությունը»[2]։ Ավելի լավ է ասել, ավելացնենք մեր կողմից, ժխտում էին ֆեոդալական հարաբերությունների ամբողջ սիստեմի գոյությունը։

Իր այս տեսակետը աղբյուրների և գրականության տվյալների համաձայն սովետական մեկ արդեն ծանոթ հեղինակների ոգով հիմնավորելուց հետո, Մ. Հ. Ադոնցը անցնում է Արևելյան Հայաստանի ֆեոդալական հողատերերի երկու կատեգորիայի՝ մուլքադարների և թիուլդարների բնութագրմանը, այդ հարցում էլ ընթանալով իր նախորդ սովետական ուսումնասիրողների ուղիով։

Մուլքադարների և մուլքադարական հողատիրության մասին իր բոլոր դիտողությունները և եզրակացությունները նա իրավացիորեն հետևյալ ձևով է ամփոփում. «Անդրկովկասի ֆեոդալական հարաբերությունների սովետական հետազոտողները (Ի. Պ. Պետրուշևսկի, Վ. Հ. Ռշտունի, Ա. Մ. Ռսայան, Բ. Մ. Հարությունյան և ուրիշներ) միջնադարյան հեղինակների բազմաթիվ նյութերի և ասույթների հիման վրա հաստատել են, որ մուլքադարական հողային սեփականությունը ֆեոդալական մասնավոր հողային սեփականության ձևերից մեկն է. այդ պատճառով մուլքադարական իրավունքը ժառանգարար

[1] *М. А. Адонц*, Экономическое развитие Восточной Армении в XIX веке, изд. АН Армянской ССР, Ереван, 1957.

[2] Նույն տեղում, էջ 28—29։

անցնում է և որևէ պետական ծառայություն կատարելու պարտավորությամբ պայմանավորված չէ»[1]։

Շիշտ է նաև նրա ըմբռնումը Արևելյան Հայաստանի ֆեոդալական հողատիրության և հողատերերի երկրորդ կատեգորիայի՝ թիուլդարների մասին։

Հենվելով Ի. Շոպենի տվյալների, մասամբ նաև Ի. Պ. Պետրուշևսկու մանրամասն ուսումնասիրության վրա, Մ. Հ. Ադոնցը նշում է այն հիմնական տարբերությունը, որ գոյություն ունի մուլքադարների և զանազան կարգի թիուլդարների միջև. վերջինների հողատիրությունն իրրև կանոն կապված 'ր պետական ծառայության հետ, հետևարար հողը ժառանգական սեփականություն չէր ու չէր կարելի վաճառել, և թեպետ այդ վիճակին հասնելու փորձերը քիչ չէին, բայց մասնավորապես Երևանի խանության մեջ մեծ չէին նաև այդ նկրտումների արդյունքները վերջին սարդարի օրոք։

Շատ հին ու նոր ուսումնասիրողների նման նա էլ իրավացիորեն նմանություն է տեսնում մուլքի և ֆեոդ-ալլոդի ու թիուլի և բենեֆիցիայի միջև[2]։

Մ. Հ. Ադոնցի՝ վերը շարադրված մտքերը Իրանում ու Արևելյան Հայաստանում հողի սեփականության, ֆեոդալական հողային սեփականության և հողատերերի՝ մուլքադարների, ֆեոդալական պայմանական հողատիրության և հողատերերի՝ թիուլդարների մասին,— առարկություն չեն հարուցում և պետք է ընդունելի համարել, իսկ այդ մտքերը հիմնավորելու համար նրա բերած որոշ նոր նյութերն իրենց հերթին ամրապնդում են սովետական ուսումնասիրողների հայացքների ճշտությունը՝ նշված հարցերի նկատմամբ։

Սակայն Մ. Հ. Ադոնցի կողմից քննարկված և այս հոդվածում մեր ուշադրության առարկա հանդիսացող հարցերից մեկը անորոշ է մնացել և դրա մասին դժվար է պարզ պատասխան գտնել նրա գրքում։ Խոսքը վերաբերում է ճորտատիրության գոյությանը Արևելյան Հայաստանում Ռուսաստանին միանալու մոմենտին։

Ինչպես տեսանք, Մ. Հ. Ադոնցը այդ մասին հետևյալ դիտողությունն է անում, առարկելով երկրի ամբողջ հողը շահի սեփականությունը համարելու կողմնակիցներին, թե «նրանք ժխտում էին Պարսկաստանի նախկին տիրապետություններում ճորտատիրության գոյությունը»[3]։

Մի այլ կապակցությամբ անդրադառնալով այդ հարցին նա նշում է, «որ իրոք մուսուլմանական աշխարհում ձևականորեն ճորտատիրական իրավունքը բացակայում էր, սակայն այդ դեռ չի նշանակում, որ այդ երկրներում գոյություն ուներ գյուղացիների անձնական ազատություն։ Արևելքի երկրներում գյուղացիությունը նույնպիսի իրավազուրկ դրության մեջ էր, ինչպես որ Ռուսաստանում և Արևմտյան Եվրոպայի երկրներում ֆեոդալիզմի ժամանակաշրջանում։ Պարսկական տիրապետություններում ֆեոդալական շահագործման իրականացման համար նույնպես կարևոր դեր էր խաղում անձնական, արտատնտեսական հարկադրանքը»[4]։

Մեզ թվում է, որ անորոշությունը հենց բերված պարբերության մեջ է հետևյալ պատճառներով։

---

1 М. Адонц. Экономическое развитие Восточной Армении в XIX веке, стр. 36.
2 Նույն տեղում, էջ 36—38։
3 Նույն տեղում, էջ 28։
4 Նույն տեղում, էջ 58։

Իհարկե, ճիշտ է, որ մուսուլմանական երկրներում ձևականորեն ճորտատիրական իրավունքի բացակայությունն ամենևին չէր նշանակում, թե այնտեղ կար գյուղացիների անձնական ազատություն։ Քանի որ ֆեոդալիզմի գոյությունն այնտեղ անկասկածելի իրողություն ենք համարում, ապա գյուղացիների անձնական ազատության մասին խոսք լինել չի կարող։ Ա՛յս չէ վիճելի հարցը սովետական ուսումնասիրողների միջև, այլ այն, թե գյուղացու իրավազրկությունը, նրա վրա ծանրացած «արտատնտեսական հարկադրանքը» մասնավորապես Արևելյան Հայաստանում Ռուսաստանին միանալու նախօրյակին։ Ասել էր արդյոք այն աստիճանին, ինչ որ Ռուսաստանում և Արևմտյան Եվրոպայի երկրներում ֆեոդալիզմի այն էտապում, որը սովորաբար ճորտատիրություն է անվանվում։ Քանի որ հենց դրա մասին է խոսքը, երբ ֆեոդալական գյուղացին ճորտացված էր, այսինքն ամրացված էր հողին, զրկված տեղափոխման իրավունքից և անձնական կախման այնպիսի աստիճանի էր հասած, որ կարող էր վաճառվել, նվիրվել և այլն, թե՛ հողով, և թե՛ առանց հողի, և այդ ամենն ստացել էր իրավական ձևակերպում, գոյություն ուներ ճորտատիրական իրավունք։

Ինչպես վերևում ցույց է տրված, Ի. Պ. Պետրուշևսկին այն տեսակետն է պաշտպանում, որ Իրանում, ինչպես և նրա կազմի մեջ մտնող Արևելյան Հայաստանում մինչև նրա միանալը Ռուսաստանին, գյուղացիության հիմնական մասսան ճորտացված էր, թեև այնտեղ ձևականորեն գոյություն չուներ ճորտատիրական իրավունք։

Բ. Հարությունյանը, Վ. Ռշտունին, ինչպես նույնպես նշված է վերևում, հիմնավոր չեն համարում այդ տեսակետը և գտնում են, որ մասնավորապես Արևելյան Հայաստանին վերաբերող բոլոր տեսակի տվյալները վկայում են միայն ճորտատիրության բազմաթիվ տարրերի առկայությունն այնտեղ, և ո՛չ մի դեպքում չի կարելի խոսել Արևելյան Հայաստանի գրեթե ամբողջ գյուղացիության ճորտության մասին։

Մ. Հ. Ադոնցն անորոշ է թողնում ահա հենց այս հարցի պատասխանը, որովհետև, բացի վերևում բերված իր մտքից, որ ձևակերպված է Ի. Պ. Պետրուշևսկու ըմբռնման ոգով, նա մի այլ տեղ, որոշ տվյալների քննությունից հետո, այսպիսի պնդում է անում, որ պաշտպանում ենք նաև մենք, «Նարրատիվ աղբյուրների և արխիվային նյութերի բերված տվյալները մեզ հիմք են տալիս եզրակացնելու, որ ինչպես Երևանի, այնպես էլ Ակնդրկովկասի մյուս մուսուլմանական պրովինցիաներում գոյություն ունեին ճորտատիրության տարրեր, միայն այն զանազանությամբ, որ գյուղացիության հիմնական մասսան ամրացված էր ո՛չ թե առանձին ֆեոդալների հողին, այլ ամեն խանության տերիտորիային, ավելի ճիշտ՝ որոշ տուրքերի և պարհակների»[1]։

Այստեղ, ինչպես տեսնում ենք, խոսվում է Երևանի և այլ խանությունների մեջ գոյություն ունեցող «ճորտատիրության տարրերի» մասին, ինչ որ, մեր կարծիքով, լիովին համապատասխանում է իրականությանը։

[1] *Մ. Ադոնց*, Экономическое развитие Восточной Армении в XIX веке, стр. 63.

* * *

Այսպիսով, առաջադրված պրոբլեմի քննությունը ցույց է տալիս, որ սովետական պատմաբանների, իրավաբանների, և տնտեսագետների ուսումնասիրությունների հիման վրա պետք է հերքված համարել ցարական իշխանության պաշտոնական ներկայացուցիչների և ցարական կիսապաշտոնական հեղինակների տեսակետն Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կարգի բնույթի մասին։ Այս վերաբերում է նաև բուրժուական և նարոդնիկական հեղինակներին։

Սովետական ուսումնասիրողների դրական գործը կարելի է համարել այն, որ նրանք ընդհանուր եզրակացությունների են հանգել Արևելյան Հայաստանի ֆեոդալական հարաբերությունների, ֆեոդալական սեփականության և հողատիրության երկու հիմնական տեսակի՝ մուլքադարության և թիուլդարության էության վերաբերյալ։

Սակայն դեռ հաղթահարված չէ որոշ տարաձայնություն մեկ հիմնական հարցի շուրջը. ոմանք այն միտքն են պաշտպանում, որ գրեթե ամբողջ գյուղացիության ճորտացումը, ուրեմն և հողին ամրացնելը, Իրանի հետ միասին դարեր շարունակ իրականություն էին նաև Արևելյան Հայաստանում, ուրեմն և Ռուսաստանին նրա միանալու նախօրյակին, իսկ մյուսները գտնում են, որ կարելի է խոսել Արևելյան Հայաստանում միայն ճորտատիրության բաղմաթիվ տարրերի, բայց ոչ մի դեպքում գյուղացիության ճորտացման և հողին ամրացնելու ակներև իրողության մասին, ինչպես այդ եղել է Վրաստանում կամ Ռուսաստանում։

Պետք է հուսալ, որ մոտ ապագայում սովետական ուսումնասիրողների ջանքերով լուծում կստանա նաև այդ վիճելի հարցը, որը կարևոր նշանակություն ունի XIX դարի գյուղացիության պատմության հետազոտությունը ճիշտ հիմքի վրա դնելու համար։

ФЕОДАЛЬНЫЕ ОТНОШЕНИЯ В ВОСТОЧНОЙ АРМЕНИИ НАКАНУНЕ ЕЕ ПРИСОЕДИНЕНИЯ К РОССИИ

В. А. РШТУНИ

(Резюме)

Известно, что царские историки, начиная с чиновника Армянской области И. Шопена, утверждали об отсутствии феодальных отношений и крепостничества в бывших подвластными Ирану областях Восточного Закавказья — в Азербайджане и Восточной Армении. При этом они отрицали существование частной земельной собственности, феодально-помещичьи права местных землевладельцев — мюлькадаров и тиульдаров, наличие феодально-крепостнической эксплуатации крестьянства. Эту же точку зрения с той или иной мотивировкой защищали почти все армянские буржуазные и мелкобуржуазные историки.

В работах советских историков — Б. М. Арутюняна, И. П. Петрушевского, Ц. П. Агаяна, юриста А. М. Есаяна, экономистов О. Е. Тума-

няна и М. А. Адонца — опровергнута точка зрения царских официальных и полуофициальных представителей на социально-экономический строй Восточной Армении, как и подобная точка зрения армянских буржуазных и народнических исследователей и публицистов.

Советские ученые пришли к правильным выводам о феодальных отношениях в Восточной Армении, о характере феодальной собственности и помещичьего землевладения в его двух главных формах (мюлькадарство и тиульдарство).

Однако между упомянутыми советскими исследователями имеется расхождение по одному важному вопросу. Одни из них придерживаются того мнения, что, как и в Иране, в Восточной Армении, до ее присоединения к России, в течение нескольких веков почти все крестьянство было закрепощено; другие, наоборот, утверждают, что можно говорить о существовании там только многих элементов крепостничества, но не о закрепощении крестьянства, как это было в России или Грузии. Нет сомнения, что в ближайшем будущем этот вопрос получит должное марксистское освещение.